



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 27

ՇԱԲԱԹ

2 ՅՈՒԼԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	Գ.Ա.Ի.Ա.Ո.Ա.Ց ՀԱՄԱՐ	Ա.ՐՏԱ.ՍԱ.ՀԱՄԱՐ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՅԱՆ անունը կեղծող կարգ մը նորիւրկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին:

ՍԱՐԳԻՍՅԱՆ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԻՐ՝ քի՛ Կ. Պոլիս, եւ քի՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին զոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹԻ ժամացոյցները Բարիկի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հասր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی باب عالی جاده می ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻԶԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի հասրէսի քիւ 23



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Սնկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ
լայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոյութեանց
և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ դիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅՏԱՅՏԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը և զիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՄԱՍՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՇԱՐՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻԻՏԱՐ | 2արշը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր զաւառներու թոյր ֆալաֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզզուլուի տունը:

ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇԱՐՈՐՀԵՍ.Լ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՄ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵՄԵՐԻ ԶԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ



ՀԻՄԵՆԻ ԶԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

- ՖԻՆԱՆՍԱՅԻՆ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
- ՖԻՆԱՆՍԱՅԻՆ** Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ:
- ՖԻՆԱՆՍԱՅԻՆ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգեհաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեան զբաղմունքն է ՔՐԷՏԻ ԼԻՍՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի զաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ

Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ս 27

ՇԱԲԱԹ

2 Յուլիս 1905

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ուսանող մանկուսիւնը մեր եւ օտար վարժարաններուն մէջ . (Խմբագրական) . — Յ. Մ. ԱԶՆԱԽՈՐԵԱՆ : Թափառումներ (Բըքի Շան) . — Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ : Մըրմունջներ . — ԻՍԿՈՒՀԻ ԳՐԻԴՈՐԵԱՆ : Հանդէս քե մարդ տես . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Գրական Ասուլիս . — ՆՐ. ՃԻՒՀԵՐԵԱՆ : Լուսերու բաժին : Կապիկներու աւսարհին մէջ . — ԼՈՒԻ ՓԱՔՕԼԻՍ :

ՈՒՍԱՆՈՂ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԵՒ ՕՏԱՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ Բ.

Առջի չարթու այս էջերուն վրայ ողջովի յառաջարանի մը մէջ ըսած էի թէ՛ միակ նպատակը որ ունիմ, ուսանող մանկութեան օգտակար ըլլալու փափաքն է, հետեւաբար երբ անոր բարոյական, ֆիզիքական ու կրթական կացութեան բաղդատութիւնը կընեմ մեր և օտար վարժարաններու մէջ, պէտք կըլլա՞ր անգամ մըն ալ կրկնելու թէ բնա՞ւ մասնաւոր դիտում մը չունիմ գովելու մին կամ պարսաւելու միւսը, քանի որ ո՛չ չա՛հ, ո՛չ ալ ակնկալութիւն մը ունիմ այդ երկուքէն, չունենալով մի և նոյն ատեն կրթական պաշտօնեայի մը հանգամանքը :

Իբրեւ զաւկի տէր մարդ, իբրեւ դպրոցէ քիչ շատ հասկըցող անհատ, խղճի պարտք կը սեպեմ, ըսկ անձնական համոզումիս ու փորձառութեանս ապաւինելով, մասնաւոր ընել թերին, յոռին սրուն ենթարկուած է մեր մանկական բարաստաններու բոլոր մանկութիւնը, երբ անդին իր նմանները օտար յարկերու տակ, առելի խնամքատ ատրրերու ձեռք, կը վայելեն օգտակարն ու գեղեցիկը :

Մեր պղտիկները, հակառակ մեր լաւագոյն անկալութիւններուն, հակառակ մեր լաւատես նկատումներուն, հակառակ վերջապէս մեր թերին ծածկելու ունակութիւններուն մնայած են ու կը մնան՝ մեր յարկերուն մէջ՝ հոն, ուր որ են, առանց քայլ մը անդամ առնելու, մինչ անդին, օտար հաստատութիւններու մէջ այդ միւսնոյն պղտիկները օր աւուր կը զարգանան, հոգեկան ու մարմնական զնահատելի յատկութիւններ կը ցուցադրեն՝ հակառակ մեր բերանացի ու գրաւոր կանչուողութիւն, հակառակ մեր հանապազօրեայ անհամակիր վերաբերումին:

Դիտեմ, թէ անկոխ գետնի մը վրայ կը դնեմ սուքս. և թէ, շատեր կան որ կը մեղադրեն զիս ա՛յոյափ առաջ երթալու համար, բայց և այնպէս հոգ չեմ ընել, որովհետեւ կղզւամ թէ եկած է ժամանակը, կրթական գործին մէջ իրերը իրենց իսկական դոյնին մէջ տեսնելու: Հերի՛ք, որչափ յուսախաբ եղանք մեր դպրոցական գործերուն մէջ. բա՛ւ է որքան կրկնեցինք սէւր ներս, ճերմակը դուրսի տրտառոյ բանաձեւը, ալ կօգտէ՛ որչափ խաբեցինք մենք մեզի, խաբելով մեր մատաղ սերունդն ալ իր է՛ն թանկագին, է՛ն յուսալից նախաքայլին մէջ: Մէկդի դնենք ալ ամէն սուտ ու կեղծաւոր ցուցադրութիւն՝ ըլլա՛յ անքննութիւններու ատեն, ըլլա՛յ հանգէտներու ժամանակ և գնահատե՛նք, օրինակե՛նք լաւը, վախճանակ անօգուտ ու անշահ յամառութիւնով մը պնդելու թէ՛ դէշ է, ամէն ինչ որ ուրիշին քով կը տեսնուի խոթուի, նուշ աչուին ունենա՛նք, ուրիշին կոյր ըսել կարենալու համար:

* * *

Միտք չունէի թէ և ըսելիքներս չաւարտած ուրիշը մտիկ ընելու, բայց որովհետեւ այդ ուրիշը միւսնոյն դպրոցական խնդիրն է որ կը յուզէ, թող ներեն ինձ ընթերցողներս պղտիկ չեղում մը ընել:

Ուսուցիչ մը, որ մծաւոր ժամանակի մէջ ամբողջ դպրոց մը վարելու պաշտօնն ալ ունեցած էր, այս օրերս բաներ մը գրած էր մեր պատուական Մանգոյմէին մէջ՝ օտար վարժարանները վերնագրին տակ:

Իրիւն նիւթիս հետ առնչութիւն ունեցող յօդուած մը բնական էր որ հետաքրքրութիւնով կարդայի, կը ցաւիմ սակայն ըսել որ նոր բան մը չկար դարձեալ հոն ալ: Յօդուածագիրը չեմ գիտեր քանի հազարերորդ անգամը ըլլալով կը կրկնէր թէ՛ մեր աղաքները, օտար վարժարաններու մէջ, տոհմային դաստիարակութենէ զրկուած՝ « շուտով կը խմորուին օտար բարքերուն հետ, կը խամրին անոնք և կը կորսնցնեն իրենց բոլոր մայրենի յատկութիւնները, և կուգան մեր ընտանեկան ու ընկերական շրջանակներուն մէջ կատարեալ scandale մը դառնալ »: Եւ վերջացնելով իր գրութիւնը դանգաժի աւանդական տարափը կը տեղար ծնողներու հասցէին, իբրեւ թէ անոնք իրենց զաւակներուն իրական օգուտը իրեն չափ ալ չկրնային տեսնել: Եթէ չեմ սխալիր, յարգելի ուսուցիչը չա՛տ կը սխալի երբ կը կարծէ թէ՛ օտար վարժարաններու մէջ զաւակ ունեցող ծնողքները « իրենց l'uxeին կամ ուրիշին ruseին առարկան դարձնել կուզեն իրենց զաւակները »: Ո՛չ, բարեկա՛մս, ոչ. բոլոր զաւակի տէր ծնողքներու կողմէ կ'ապահովցնեմ ձեզ թէ՛ չկայ անոնցմէ մէկը որ ձեր այդ համոզումը

հաստատէ . անոնց ամէնքն ալ , սկսած է և ազքատիկէն մինչև է՛ն հարուստը , իրենց պղտիկներուն բարեկրթութիւնն է միայն որ կը փնտռեն , և ճի՛շդ այն իրաւունքով որով դուք , նոյն իսկ պարզ լիմոնի մը համար , կը ձգէք ձեր է՛ն մօտիկ ազգականն ու բարեկամը և կերթաք լաւագոյնը ծախողին , նոյն այդ իրաւունքով շատ մը ծնողքներ ալ կերթան , իրենց զաւկըներու սիրուն , փնտռելու , ձեռք բերելու այդ բարեկրթութիւնը՝ հոն , ուր կը յուսան լաւագոյնը գտնել : Այս է ահա այն միակ պատճառը որով այդ ծնողքները կ'առնեն կը տունին իրենց զաւակները , իրենց ուզած վարժարանները : Ուստի Դուք , վարժապետներդ , եթէ կուզէք որ մեր պղտիկները մնան ձեր քով , սիրեն իրենց դպրոցը , սիրեն իրենց սրտին , հոգիին ու մաքին մարդիկները , սիրեն վերջապէս իրենց սիրելագոյն խաղալիքները , ջանացէ՛ք գնել հոն ան , ինչ որ դրած են ուրիշներ : աս կը փնտռեն ծնողքները , աս կը փնտռեն պղտիկները : Առեւտրական կեանքին մէջ , մարդիկներու՝ իրարու հետ ունեցած բոլոր յարաբերութիւններուն մէջ՝ նոյն իսկ բարեգործութեան մէջ , ա՛ն է փնտռուած բանը , լաւագոյնին ձգտումը :

Եւ սակայն թող չկարծուի թէ մեր վարժարաններու անյաջողութեան բո՛ւն պատճառը ուղղամիտ և կարող ուսուցչութեան մը չզայութեանը կը վերագրեմ , քա՛ն լիցի , կայ տակաւին դորաւոր պատճառը , որուն վրայ ալ յաջորդ թուով , եթէ յարգելի բարեկամս , թերթին Տնօրէն-Խմբագիրը հաճի տեղ տալ ինծի :

Յ. Մ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ



Մ Ր Մ Ո Ւ Ն Զ Ն Ե Ր

Երբոր կանչէ գերեզմանէն զիս Աստուած ,
Եւ երբ խոնջած դէպի հանգիստ ես երթամ ,
Իմ ցաւերուս կոսսանքներէն ազատուած
Մահուան փունջով նընջեմ ի հող անխընամ ,
Ափ մը սեւ հող զիս կը ծածկէ միանգամ :

Մարմարիոցէ , կրանիքէ գունագեղ
Շիրիմի մը ծանրութեան օսկ անխընամ ,
Ոսկերոսիս չի հանգաւորսի , ո՛հ , հոնսեղ ,
Արդէն լի է սիրքս խորունկ խոցերով ,
Բայց ա՛փ մը հող զիս կը ծածկէ՝ անվերջով :

Բերա

Այլ , ո՛հ , անո՛ւե փունջ յետին , յաւիտեան ,
Քաղցր է խաղաղ ու անխընամ , փառաւոր ,
Ցաւն ու վիշտը կը հեծեծեն հոն անկեան ,
Ո՛հ , հոն լո՛ւռ է ու մո՛ւք , հանգի՛ստ մօտաւոր ,
Ուր ա՛փ մը հող զիս կը ծածկէ իրա՛ւ որ :

Ափ մը սեւ հող գուցէ նետէ իմ վըրայ ,
Մահուանէս վերջ իմ սիրելին , բարկ դժմով ,
Ա՛ն , զոր ես լոկ սիրած էի զերդ տղայ ,
Ա՛ն . . . , որ անցուց օր մը պիտ' գայ իմին փով ,
Ափ մը սեւ հո՛ղ պիտի նետէ իմ վըրայ . . . :

ԻՍԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ



ԲԱՓԱՌՈՒՄՆԵՐ

ԲԵՐԹԻ ՇԱՆ

[PETIT CHAMPS]

Հակառակ բերթի (պղտիկ) ածականին զոր փակցուցած են Բերայի այդ հիանալի պարտէզին, անիկայ իր մէջ կրնայ պարփակել 666 կին, 444 միւսիւ (չիք ըլլալը պայման առաջին), 333 օրիորդ, 222 սպասուհի, բառամանա, թող զմանկտիս, զխռնոտախ պէպէս, զնորածինս և . . . զնորածնեւածրարիկս :

Կը դարմանամ շիտակը, երբ Բերացին օգտփոխութեան համար ամէն ամառ 30-40 ոսկի կը յատկացնէ, քանի որ նոյնիսկ քիթին տակը սքանչելի Բքթի շանը ունի, ուր կրնայ դիմել ցերեկուան տօթը թօթափելու, իրիկուան օգը ծծելու :

Անցեալ իրինկուն, հոգակաւոր ՖանՖաուր լսելու համար վերջապէս ոտքերս զիս հոն տարին :

Ալիւրի պարկին վրայ դադափար ունի՞ք, որչափ թոթուես՝ այնչափ փոյի կըրնաս հանել անկէ, օրերով, ամիսներով . նոյնն էր նաև Բերայի ժողովուրդը, բոլորը օգտփոխութեան գացած ըլլալով հանդերձ, բաղմութիւն ըսելու չափ լեցուն էր պարտէզը, բաղմութիւն մը մաքուր լուացուած նոյն իսկ պողպատայէն ելած կրնամ ըսել :

Ամբողջ ներկայները eu grande toilette կին, աղջիկ, երիտասարդ, մինչև իսկ իրենց վերջին ճամբորդութեան յատակադիծը պատրաստող գլխարկաւոր պառպանները ածիւռած և կոկիկ :

Ժամը տառն և մէկին (Ը. Թ.) հոն ծառի մը տակ սեղան մը կը գրաւեմ, և առաջին աչքիս զարկածը կըլլայ եռոտանի սեղանին վրայ մատիտով դրուած սա իտալերէն բառը amore . . . զործիս չի դար, կ'ելլամ ուրիշ մը գրաւելու համար, մտածելով թէ կրնայ ըլլալ որ ինծի վերագրեն այն սիրտ խառնուութեան բառը : Աստուած իմ հոտ ալ կրկին՝ մատիտով դժուած սիրտ մը որուն մէջ գրուած է coeur, և որովհետև pkon չեմ,

կը տեսնամ ու կը մեկնիմ հոտկէ, մինչ կառսօնը ձեռքը առջին ի վար կարուած գրպանին մէջ ետեւէս կը պտըտի, առաջին տիտիկիս քօմանտ մը ընդունելու համար :

Երրորդ սեղանին վրայ, որուն մօտ նըստելու դիտաւորութիւն ունիմ, կրկին բաներ մը կան դրուած, բայց յունարէն ըլլալուն չեմ կրնար կարգալ, և սակայն կառսօնին ըրած խնդրանքիս վրայ, մարդուկը կսկսի խնդալ և արելու սրբելու փորձեր կընէ, կստիպեմ կը խնդայ, կ'աղաչեմ կը կարմրի, վերջապէս տեղի կուտայ թարգմանելով դրուածքը, որ էր, « հոս նստողը, կամ խելք չունի և կամ դրամ . . . » :

— Հէ . . .

Ես որ երկուքն ալ կը կըրեմ ինքզինքս կառավարելու չափ (°), ինչ գործ ունիմ հոտ, զսպանակէ մը մղուելու պէս կը ցատկեմ տեղէս, և այս անգամ կորոչեմ տօտան տօլապի ձիերու պէս դառնալ ու դառնալ, առանց տիտիկ ընելու, որպէս զի նըմանօրինակ վերտառութիւններու չի հանդիպիմ :

Հոն մէջտեղը 40-45 առթիւթներ, զըպրոցական պատիժի պէս յօտնկայս կը փչեն իրենց գործիքները, յոգնութենէն աւելի տաքէն կասկապուտ կտրած, և իրենց նուագին հեշտօրօր թէմբօով տակաւ լեցուող բաղմութիւնը կը դառնայ պարտէզին շուրջը, ինչպէս ես մեղաւորս :

Հաւատացէ՛ք, խելք ըսուած բանը չունին ոս Սկիւտարցիները, որոնք պարապ տեղը դրամ կը վճարեն Եւրոպայէն եկած մօտեմբու, ես պիտի առաջարկէի որ իրենց քօթիւմին ձեռքերը համար Բքթի շան երթային իրիկուն մը, տեսնելու համար հօք մուլօքէ ձեւերը, զորս կրողը . . . կռող չի դառնար :

Չարմանալի բան կըսեմ ինքնիրենս, այս կիներուն քալուածքն ալ տարբեր է : Երեւակայեցէք թէ անաղին պարտէզին մէջ չըջագայող կիները կարծես կրակի վրայ կը կոխեն, այնքան ոտքերուն մատներով կը ցատկաւորեն գետնի աւաղին վրայ փէջ բռնուածքին հիանալի, գլուխ ճօճելին սքանչելի, քալուածքին նազելի, ձեւերին շնորհալի, բարեւելին համեստունակ, հասակին շիջիտակ, դէմքերը հրեշտակ, բուռն սպիտակ, եւայլն :

Հապա միւսիւնները , բոլորն ալ մաքուր , կոկիկ և շիւք : 90 % ակնոցաւոր , կարծես Բերայի մթնոլորտը աչքի ցաւ պատճառած է ամենուն , սրածայր պոթեր , ճերմակ և շամբանը (ըը մի կարգաք , կազաչեմ) այնչափ սրածայր , որ կէս կանգուն տոտոխ կերեւայ , մինչդեռ մէջինը հազիւ մէկ դիզ է բնականէն :

Բերացին վարժուած է , թերեւս միւսիւ 0.օքեկէն տեսնելով (0.օքեկ այն հռչակաւոր վազող մարդն է , որ 100 անգամ դարձաւ նոյն պարտէզին շուրջը , մէկ քանի տարի առաջ) , բայց կրնամ ըսել թէ , տեսայ օրիորդներ և միւսիւններ , որոնք օւտէկն ալ դերազանցելին լէյլէկն ալ . . . , չիտակը ես չի կրցի շարունակել պտոյտս , և սեղան մը առի ճամբուն եզերքը գաւաթ մը պաղ դարեջուր կուլ տալու համար :

Հոս տեղի կառսօններն ալ բեռալիկն ըլլալուն , քաղաքավարական բոլոր ձեւերը գիտեն , և մէկ նայելուն կրնան կռահել թէ՛ ինչպիսի հովառտաւ մընէ իրենց ոստայնին մէջ բռնուողը :

— Տիւզ կէթիբէնիմ , ըսաւ ինծի մօտենալով , որ նոյն պահուն մօտէս անցնող սիրտ խառնուող տէքօլթէ մը կը դիտէի խպինելով :

— Նէտէն աննաւուն տիւզ ըռազըճը օւտուղումը . . .

— Սիգ Սկիւտարլը սընըզ պիլիօրում . . . ըսաւ քմծիծաղով մը , որ ալ աւելի բարկացուց զիս :

— Նէտէն , ըսի աչքերս դուրս ձգելու չափ բանալով . . .

— Իւսթիւնիւզ թօղ օլմուչ պիւր վուրցաւ կէթիբէնիմ . . .

— Պիւր գատէք Սքաթէն կէթիբ , ըսի , մինչ մարդուկը ,

— Սքաթէն չիչէ օլուր , գատէք օլմազ . . . Ու գանկիս մէջ փոթորիկը սկսաւ ,

10 զրուչէն ելլալ պէտք էր . . . passo !

Առանց քրտինքս սրբելու կ'ելլամ տեղէս , ու նորէն կըսկսիմ պըտտիլ , քանի որ պըտոյտին մէջ ոչ տիւզ կայ ոչ ծուռ , ոչ Սքաթէն :

Վարը ընդարձակ գետնին վրայ , մեղուի փեթակի մը պէս կը բզզան պղտիկ պէպէսները , բոլորն ալ մաքուր հագուած , և ու

րոնց մօտ կը հսկեն սպասուէիները , բառամանները , տատանները :

Բերայի պարզ սպասուէիներն անգամ , հով մը ունին վրանին , չիրինութիւն մը , կոկիկութիւն մը , երիտասարդները տվան տոռա քօւսէներով , իսկ տարեցները քօւսաժով , սղիտակ պօնէներով , ծարերը մինչև ոտքերին ժապաւէններով դարդարուն :

Սակայն այս էակներն ալ իրենց թերութիւնները ունէին , զորս տեսայ :

Գործի վրայ էին երեկոյեան այդ ժամուն , մէկ մէկ ծուռ գլխարկաւոր բալիքաւեաներու դէմ կեցած , առանց անդրադառնալու կամ ուշադրութիւն ընելու իրենց խնամքին յանձնուած պղտիկներուն , որոնք գետնի աւազին վրայ կ'իյնային , կ'ելլային , կ'ուլային , կը ճչէին :

Մեկնեցայ հողէ , կրկին միւղիքը լսելու , վայելելու համար :

Երեկոյեան զովութիւնը սկսած էր տիրել կամաց կամաց , ու ես շողիկ կը վազցընէի այն սեղաններուն առջև , որոնց վրայ փըրփրադէզ պիւսան կը կենար նուրբ քրտինք մը յօրինելով գաւաթներու դուրսերէն , և որ ասպարողները չէին խմիր , այնքան զբաղած էին զիրար դիտելով :

Հիմա , այսինքն ժամը 12 ին (Ը. Թ.) բոլոր սեղանները գրաւուած , ու պարտէզը իրաւ կենդանի ծաղիկներով չըջապատուած էր ալ :

Պահ մը կարծեցի թէ՛ դպրոցական պարգեւարաչխութեան մը ներկայ կը գտնուիմ , երբ աչքիս առջև ունէի ճերմակ թուալէթներ , ճուր ճերմակ թիւլ պլուզներ , որոնց տակ միսը իր միսը կը ցուցնէր միսերու , մինչ միսերը կը մսէին թերեւս փուշ փուշ ըլլալով մուսըլին տը սուաններուն տակ :

Հոս տեղն է ըսել որ մարդ , կամ զըրպանը լեցուն ըլլալու է Բըքի շանի դռնէն ներս մտնելու համար , և կամ ինծի պէս հաչիւ ընողներ , պէտք է տանը թուրին ծառին տակը նստին :

Աչքիս տեսածը՝ քրակը չ'արտօնէր , քըսակին արտօնածը՝ աչքը չը գիջանիր , ուստի բան գործ չունիս նէ դարձիր ու դարձիր : Ահա նեղուածք կեանքը ամէն անոնց համար , որոնք՝ 140 զրուչնոց քօթիւմ մը կռնակներն , 55 նոց դեղին պօթերով , 5 նոց գաւա

ւաղան մը ձեռքերնին և $5\frac{1}{2}$ զրուշ գրպանի քաբիքալով Բերայ կ'ելլեն, Բըքի շանդէս հայ-լայն գեղեցիկ պարտէզ մը վայելելու համար: Ըստ իս աւելի լաւ է թաղին սրճարանը երկու լոխումի բառթի մը նարտ խաղալ նստուկ, քան թէ շքեղ պարտէզ մը չափել անկուտի:

Ահա երեկոյեան կեանքը Բըքի Շանին, զոր ջանացի նկարագրել իր բնական վիճակին մէջ, խօսքիս չի հաւատացողը կրնայ դիմել, և այն ատեն պիտի հաստատէ ճշմարտութիւնը:

Խրատականս:

Կուզէ՞ք Բըքի Շանը վայելել:

Նախ քսան փարայ տալով կօշիկնիդ ներկել տուէք, լնական է հագուստնիդ ալ պիտի խողանակուի: Ակնոց մը անցուցէք քիթերնիդ, թիթեւ գաւաղան մը առէք մատներնուդ մէջտեղը, պիտի երնիդ վեր տընկեցէք, ցատկուտելով քալեցէք, և որ աւելին է, զրպաննիդ առ նուազն ճերմակ մը դրէք, այն ատեն կառածոր չի համարձակիր զձեզ Սկիւտարցիի տեղ դնելով, ըսել առաջին առթիւ:

— Պիտի դատէք տիւզ հէ՞ . . . :

Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիզի եւ Պեռլինի

համալսարաններէն

Առջին անոնք, որոնք կուզեն քիչ ժամանակուան մէջ, խիստ դիւրամատչելի պայմաններով հիմնովին սովորիլ Գերմաներէն լեզուն՝ ինչպէս նաեւ Ֆրանսերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻՒ

պէտք է դիմեն Պաֆէ-գալիու Բալուգալի վաճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրա Բանութիւնները դասախօսութեան առթիւ:

10—5

ՆՈՐԵԼՈՒԿ ՏԱՆԹԻՍԹԸ

Ատամնաբուժիչներ բժշկական կարիւր մէկ ճիւղը ըլլալով հանդերձ, կարգ մը հետեւողներ տարբեր ըմբռնած են զայն: Արուեստին յառաջդիմութեան հետ իրենք ալ կը յառաջդիմեն . . . ալճէպոսայի հաշուով, ուր + նշանը ցոյց կուտայ:

Կարեւոր թաղի մը մէջ հաստատուած ատամնաբոյժի մը պատմութիւնը պիտի ընենք հոս. երբ ատամնաբոյժ կը սենք, դռանը վրայ փակցուցած բլաքէն դատելով է միայն, որուն պղինձը ամէն օր լէմոնով կը չփուլի աչքի զարնելու համար:

Տանթիսթը իր արուեստէն դուրս նուագածութեան ալ փափաք ունենալով՝ ուր կը զարնէր — թիրեւս դուռը զարնող մը չըլլալուն համար — և որպէս զի իր փափաքը իրագործէ, դրացի բարեկամի մը նուագը կը խնդրէ մէկ գիշերուան համար, Կերեւի թէ նուագը շատ կախորժի տունին մէջ, քալաքալիքի, սիլիսիսիցեկ չըլլալուն համար, և փոխանակ մէկ գիշերի՝ տառն և մէկ գիշերներ կանցընէ, որուն հետեւանքը կըլլայ մեքալոսֆոգը, այսինքն ուրքը կուտի կը փոխուի:

Նուագին տէրը ի դուր կը թախանձէ իր գործիքը ձեռք ձգելու համար, սակայն ի դուր, վերջապէս դարաւերջիկ տանթիսթը, կը յայտարարէ թէ փոսած ակումները հանելով և կամ հանածին տեղ կեղծերը չինելով պիտի կրնայ փոխարինել նուագը:

Այս իրական պատմութիւնը մեզ կը հաղորդեն ի հրատարակութիւն, որպէս զի դուռներու վրայ փակցուած փայլուն բլաքաներէն խաբուելով՝ անոր ասոր քմահաճոյքին չի զոհեն իրենց ինչքը, և կամ զգուշանան կարգ մը բարեկամներէ, որոնց փայլուն անունին, ախր Եալսային, և կեղծ անունին տակ առաւ փախաւութեան միջբոյններ կը սնանին:

Այս դարաւերջիկ տանթիսթին ո՞վ ըլլալը հասկընալ ուղղունը պէտք է նախ ակաւայի ցաւ ունենան, որպէս զի ուղղակի իր ատուհոյն զրկենք հետաքրքիր յաճախորդները:

ՀԱՆԴԵՍ ԹԷ ՄԱՐԴ ՏԵՍ

[ՕՐԸ ՕՐԻՆ ՅՕԴՈՒԱԾ]

Երբ կը կարծէք թէ ամսոյս վերջերը յաջորդաբար տեղի ունեցած դպրոցական ամառակերպի հանդէսներուն առթիւ «Հանրագիտակ» նիւթ մը չի կրնար գտնուիլ քաշքշելիք, չարաչար կը սխալիք, աղնիւ ընթերցողներս. ինչպէս փայտի տաշեղներէն քացախ՝ նոյնպէս ալ տղայական պարզ հանդէսէ մը քրքշալիլ պատկերներ կրնայ քաշուիլ:

Յունիս ամիսը, որ չորս կիրակի ունի գրեթէ, նուիրուած է պարգեւաբաշխութիւններու, որոնք մին միւսէն գերազանց չքով կը կատարուին՝ Պոլսոյ արուարձաններուն գլխաւոր վարժարաններուն մէջ:

Մենք հոս ոչ Ուսում. Խորհուրդին, ոչ վարժապետական դասուն և ոչ ալ Հոգաբարձութեան վրայ՝ կուզենք, կամ պիտի ուզենք խօսիլ:

Որչափ կարելի է պիտի ջանանք գծել այն բնական պատկերները, ինքնիրեն և բնականէն կուգան կը գծուին կարգ մը ընտանիքներու կողմէ, անոնց որոնք կիրակի ցերեկուան տաղտուկը փարատելու համար ճար ճարակ կընեն, ասկէ անկէ մտից տուժ կը մուրան, և սովորական ժամէն շատ ու շատ առաջ կուգան կը տոտոռուղուին տախտակ նստարաններու և կամ դրացի տուններէ բերուած խսիր աթոռներու վրայ:

Եթէ զձեզ չեմ ձանձրացներ, ներկեցէք որ սկսիմ պատմել նիւթս, որ դպրոցական հոտ մը ունի թէ և, սակայն հերոսները իմ և ձեր ծիծաղը շարժող ընտանեկան խօսուղւտութենքը պիտի ըլլան:

* * *

Յերեկ է՝ Տնտես, ժամկոչ, ջուր քաշող, սպասաւոր, դաստիարակ, հսկող, երրորդական վարժապետ, բոլորն ալ քաղինօի միջոններու պէս գլխաբաց և ջուրերու պէս քրտնած, աթոռ և նստարան շարելով կը դադրին, մինչ իրենց գլխուն վրայ լարուած

կտաւը փչող հովէն առաքանտի պէս կուռի, կը բարձրանայ կը սմբի:

— Աթուր ծօ' . . .

— Կեցիր նայինք ճանրմ, ո՞ր մէկը նայիմ, տահա Յակոբ աղային տունէն խօլթուիս պիտի բերեմ . . .

— Ինձի նայէ կըսէ վարժապետ մը, ժամկոչ աղբար, Տիկին Մաննիկին տունը գնայ տէ ըսէ քի չաբուիս տալուանիշ ըլլան, հէմ ես ալ հոս չըլլալու ըլլամ նէ, դուն անոնք կը ճանչնաս ես, չիտակ առ տէ սա խափֆէլի աթոռներուն վրայ բեր նստեցուր . . .

— Էյ հիմա դործ ունիմ, կը տեսնաս կոր . . .

— Հիմա ձեզէ ատոնք տէ ըսածս ըրէ:

Ուրիշ վրայկեցու մը . . .

— Ինձի նայէ անտես աղբար . . . ձեռքի դործդ ձեզէ տէ հոս եկուր . . .

— Տղոցը նստարանները պիտի բերեմ . . .

— Հոս եկուր հո՛ս, հո՛ս, սա նամակը առ տէ Օրիորդ Ծուլիկին տար, ինձի համար ըսէ քի կ'սպասեմ կոր, անդատճառ թող գան . . .

Այս և այս տեսակ հրամանները անձրեւի պէս կը տեղան սպասաւորներուն գլխուն, մինչ ժամերը կը սահին և հրաւիրեալները ծայր կուտան:

Տաքը անտանելի է, խենդ հով մը, ամբողջ փոշիէ ամպի մը մէջ առած է կարծես այդ վայրը, ուր պիտի գան երեք չորս ժամ նստին նրբաճաշակ օրիորդները, քօռսէլի տիկիները և տիք եախա միւսիւնները:

Դպրոցական տղաք կարգաւ կուգան կը շարուին բեմին վրայ, ու անօրէնը մասնաւոր սեղանի մը վրայ նստած կը հրճուի ի տես աշակերտաց կարգ ու սարգին, աչքին պոչով զննելով հանդիսականներու հոսանքը, որ քեռքօզի բաթլախ պօռուի մը պէս զիրար հրելով կուգան կը շարուին, կը բազմին նստարաններու վրայ, առանց հիւրընկալներու խօսքին անսալու:

— Շագրիկ հոս եկէք, աս թաւափէն տա-
հա աղուոր կ'երեւայ կոր . . .

— Վայ Նեմզուրիկ, դո՛ւք ալ հոս էք
եղեր . . .

— Սուս եղիր, հիշ դալու բան չէի ամա,
աս բոստալները տեսա՞ր մի . . . գլխուս մի-
սը կերան քի իլէ երթանք տէյի . . .

— Աման իրաւ մէռաք կլլալու բան է
ամա՞, ինչ ընես ճահիլ են, իչտէ տունը նըս-
տելնուն կուղեն քի էյլէնմիջ ըլլան . . .

— Ան չէ ամա Նաւդուհիյան ալ պիտի
գար, զահէր պիլէթ չի գտաւ կէնճը . . .

— Սուս եղիր, քիչ մնաց մենք ալ անոր
թխիկին կուգայինք կոր ամա, ժամկոց աղ-
բարը մէկ հատ մը պէճերուեցաւ . . .

— Էյ տահա նասըլ էք նայինք . . .
գիտնալս էքէյի վախիթ եղաւ իրար չի տես-
նալին, չամաչըրին օրը սանկ մէյ մը բառ-

մախին առջին տեսայ, անկէ պէրի հիշ . . .

— Էօֆ . . . լախըւտըթ մէրդով կը կըյ-
րեմ ամա կը խըստուլմ կոր, աղջիկ սա էլ-

բաղէթ տուր նայիմ . . . ասանկ տեղերը
կալու պահսէ աճապա, ամա ինչ ֆայտա՞ւ . . .

— Տուտու ջուրերուն մէջն եմ, ձըգէ
հովթըրիմ քիչիճիկ մը . . .

— Սա ի՞նչ հասկըցաք իս առիք տէ հոս
պէրիք նէ, կէջլամ քի խըղը սէյի մը
կայ ի պէս . . .

— Սուս հանդէսը սկսաւ, տուտու ծա-
նըդ քաշէ . . .

Տնօրէնը կսկսի վարժարանին տարեկան
յայտագիրը կարդալ . . .

— Չօդ չէյ, կարգուեր նէ թոռան տէր
կըլար, հիշ աս պօյը աչկերտ չէի տեսեր . . .

քա սա ճաւ կարգացողը դպրոցի աշկերտ
չէ . . .

— Ի՞նչ կըսես քուրուկ, տըրպատունին
մենճն է . . .

— Աղէկ եա, ինք պօյը ցցելուն, թող
ձըգէր քի աչկերտները իրենց մարիֆէթը
ցուցնէին . . . վայ մեղքիս . . .

— Լուռթիւն տիկին . . . քիչ մը կա-
մայ . . .

— Ա՛տ ով է . . . ժամուն սահանլընըն
ենք զահէր . . . քեզի՞ ինչ կըլլայ կոր . . .

— Տնօրէնին ձայնը չենք լըսեր կոր տի-
կին, խնդրեմ . . .

— Անկաճդ ծանրը կը լըսէ կոր նէ . . .

տուն կկուր տէ քեզի քիչ մը մուկի եաղ
տամ տէ տամլաթմիշ ըրէ . . .

— Լուռթիւն . . .

— Բա տուտու ծանդ աշխարհք է պըռ-
նէր, կաս կապուտ կըլլամ կոր . . .

— Երեսներդ ըռէնկլի կերեւայ, զարար
չունի, իրաւցունէ դպրատուն եմ եկէր տէյի
իս թէրպիյէ՞ պիտի ընէք . . .

— Երկու աչքդ քէօնայ քի չէնէ էս
կըյրէր, քա պապանճէ կտորճիկ մը . . .

կըճէ ուրիշ ջատուկ մը, որ հովէն ծըռած
գլխարկին տակ մատ մատ քրտինք կը թա-
փէր . . .

— Ինճի նայէ, պաղնիքին մէջն ալ աս
խալթը կերար ամա, դասը կոխդ ինջայ,
կիսեմ եա՞ . . . առջիդ նայէ տէ պերանս

պանալ մի տար սըւոր սըտեղը . . .

— Ձի հասնիս ըլլալու, տասնինճի թուղ-
թը տառցուց, սեւերես ըլլամ, էկէր օր քի
տասը լուղէթ հասկըցայ նէ . . .

— Բա կոց ընես տէ վրան պէյիթ պի-
տի չինես . . . հաւի՛ կոխ . . .

— Մայրիկ, բիւթիւն մեզի կը նային կոր,
աս ի՞նչ խախկուլիւն է . . .

Նոյն ատեն ճառախօսութիւնը աւարտած
ըլլալով, բուն ծափահարութիւն մը կսկը-

սին, որուն կը յաջորդէ դաշնակը . . .

— Ը՛նէ . . . հարդդ ողջ ըլլալու էր քի
մտիկ ընէր, բէք կը սիրէր աս էղկին . . .

— Ի՞նչ կըսես մայրիկ, ո՞ր եղանակը . . .

— Իչտէ ճիմպալօ քըլէֆթի, միաչէն
Յուսեփը կը չալէր քի ասիկայ, վրադ փուշ
փուշ կըլլար . . .

— Բա նասըլ քըլէֆթի, ծանրը կըտոր
մըն է ասիկայ, սուս եղիր տէ մըտիկ ըրէ . . .

— Ը՛նէ . . . դուք մըտիկ ըրէք, ես
անտար մըտիկ ըրեր եմ քի . . . ողորմած

հօգի հարդդ, պաղի խեղքին փչեր նէ չալել
կուտար, աս ալ էղկի է՞ քի . . .

Դաշնակին կը յաջորդէ չըջանաւարտի մը
ճառախօսութիւնը . . .

— Իչտէ, բիլիճի պէս տէլիխանլընըն
վաղը միտիլի սօմախ կը դառնան հայպէհա-

սըլ սօխախները . . . սա նայէ աղջիկ կըլ-
մանի կոր . . . որինն էնէ տէրոջը պաղըշ-

լամիշ ընէ Աստուած . . .

— Բա իչտէ թագուհիցային տղան է,
աս տարի չըճանալար կըլլայ կոր . . .

— Քա վո՛ւյ . . . կիւնահ է մըսէր , ինչո՞ւ ճանաւար ըլլայ . . . սիւլիւնի պէս արեւոյ է նէ . . . մեղայ . . .

— Քա չէ տուտու , ոտնքի դպրոցը կը լըմընցնէ , դուրս չարչի պիտի ելլայ , կըսէ կոր տուտուն . . .

— Հա՛ . . . էյ ատոր ճանաւար կըսեն . . .

— Ճանաւար չէ , չըջանաւարտ . . .

— Քեզի բան մը ըսեմ , սա բէք խօյի հայեւարն ալ բէք չիբքին լեզու է եղեր , բիւթին իբի թառափը հոգմունք ունի . . . աղէկ օր քիմ չիտէմ տէ խուլլանմիշ ալ չեմ ըլլար . . .

— Ինծի նայէ Թադիկ տուտու , եկուր անկածիդ պան մը ըսեմ . . . քիչ մը առջինիդ նայեցէք աղջիկներ , կողտուկ լախըսոր ունինք մօրերնուդ հետ . . . , սա տղան Ֆուլիկճանը աւսնէ նէ գէշ պատառ չէ . . . ի՞նչ կըսես . . .

— Սուս եղիր , մէկտեղ Երուսաղէմ պիտի երթանք զահէր , երկու աչկդ խաղայ , որ սահաթ է կը խորաթիւմ կոր ամա , զիհնա ատոր վրայ կը դառնայ կոր . . .

— Էյ կա՛յ եա՛ . . . տիրէկ կը տնկես , եանի պէճէրուիս նէ , քեզի ըսեմ , զէրէ փախցընելու պան չէ . . .

— Աղէկ ամա որի՞ն տղան է քի , կը ճաչնա՞ս կոր . . .

— Հաղա , քէլ Մարիցային թուը կըսեն , սա ուր է գիտնալու ես , տուներնին երեցաւ տէ , սիկուռթայէն չաթըն չաթըն բարաները աւին , տահա աղուորը տնկեցին , լափաղան Օննիկին տղան , հէմ դուն քուն բաղդըդ արթուն , նա մարն իլէն հարն ալ նստեր են տիրէկին տիպը . . .

— Կէտինին տիպը ասնին , թէքէռլախ շաբխաներնուն տուրիկ չիդայ քի աչկս դօրէ , ո՛ւր ըսիր . . .

— Նա ճանրմ , ճերմակ պլուզալը , մաւլի շաբխալը աղջիկ մը նստեր է նայէ՞ . . . իշտէ անոր քովը ըստախօզի պէս խաչած սուռաթըր կէնճ մը կայ , անոր քովինը . . .

— Քա ճանրմ քուրուկ , ասանկ պաները խեր է , սա կէօզլիկդ մէյ մը տայիր տէ արեւան աղուոր մը տեսնայի . . .

— Նա ամա , չիյտեմ քի աչկիդ կուգա՞յ . . .

— Տէր ողորմեա՛յ , դուն ինէ քանի՞ տա-

րու պզտիկ ես քի , աչկերնիս ույմիշ չըլլայ . . .

— Էյ տօղուտու գիտնալս քու հարսնիքիդ մարս ինծի հետը պերեր է տէ , ցատկեր ցատկեր յոգներ վարի օտան պառկեր եմ , հաթտայ հարսին թէլը պոնեմ ըսեր եմ նէ , դուն պզտիկ ես չըլլար տէյի հէօնկիւր հէօնկիւր լացուցիւր են իս . . .

— Էյ քեզի պան մը ըսեմ , իրաւ ցնդեր ես քուրուկ , իմ միտքս հիչ չիդար կոր , իմ գիտնալս դուն ան վախաը հասուկ պօյճա աղջիկ էիր տէ , մարդ տէրտ կընէ եղեր քի , Հոռորիկը աղջիկը տեղաւորցուց , իմինըս ծառքս միաց տէյի . . .

— Քա չէ՛ . . . վրաս բարի , ան վախաը ես մախաըմ չօճուիս եմ եղեր , հաթտա՛ . . . էրկան ֆիստանի հալէս ունիմ եղեր տէ , օր մը իլլէ կուգեմ , պիտի չինէք ըսեր ոտքըլըս կետինը զարկեր եմ նէ , մարս մաղերէս պոներ քիւթիւր քիւթիւր ծեծեր է . . .

— Եաղըչութին ունիս մարիկս , հէլէ աղէկ մը մտմտայ , գիտես , պաղի իրինկուն տուանը առջին կեւլայիր բիացա կընէիր նէ , ես ալ դուրս ելլամ կըսէի , մարս , դուն դուն տահա պզտիկ ես , անոնք խօսխօճա ման աղջիկներ են , քեզի չի վայլեր տէյի չեր ճըգեր . . .

— Էյ նէիսէ ճանրմ , հիմա տարիքնուս համար իրար կղեւու չե՞նք եա՛ . . . սա կէօզլիկդ պիտի տայիր . . .

— Աման դուն ալ , անտար պօշ պօղազութիւն ըրիր քի , տղան ճառը լըմնցուց տեղը նստեցաւ . . .

— Վո՛ւյ մըսեր . . . Էյ . . . նալլէթ ըլլայ , տեսա՞ր հիմա եղած պանը . . . հիմա՞ . . . հիմա ինտոր պիտի պէճերուինք . . .

— Սուս , հանդէսէն ետքը դուրս ելած վախիթնիս մարը մէկ թառափ կը քաչես , խօսք կը բանաս . . . տէմիրի սըճադ տէօյէլէր . . .

— Էյ ատ ալ կըլլայ սանքի , աղէկ ըսիր , մէյ մը սահաթը նայէիր , տահա ուշ կը քըչէ՞ . . .

— Կեցիւր նայինք , գիրք կը բաժնեն կոր . . .

— Աղջկանս տուվալէթը նասըլ է քուրուկ , տեսնալու ըլլան նէ կը հաւնին աճապ . . .

— Գէշ չէ ամա , տահա ճափճաֆի պան մը կրնայիր հաղցունէր չօճուիս . . . պա-

տանքի պէս ճէր ճերմակ ես հագուցիր . . .

— Բա ես լուրում ի՞նչ գիտնամ . . . Կէտինին տիպը ասնի, արունէն արցունք թափեց քի իլէ ճերմակ ըլլայ ֆիստանս տէյի . . .

— Էյ աղէկ ես, վրայէն բէմպէ մալի պուզա մը չունի . . .

— Ունի, խաթ խաթ, սունտուկը դրեր կղպիր է, քա պէտքը չէ՞ր քի ասոր քիչ մը օլսուն բաւլամիշ ըլլար . . .

— Բա ամա ի՞նչ գիտնայ աղջիկը, աս ալ մի զուրցէր . . . Կեցիր ասոր խօսյալ կայ, հիմա տնտես աղբարը կը կանչես ծառքը երկուքնոց մը տասնէ, չըբըն իշի տուն կերթայ կանէ կուգայ . . .

— Էյ լուս իշնայ հօրըդ գերեզմանը, աղէկ ըսիր, ինծի նայէ քա աղջիկ, անտուկիդ բալլինքը տուր . . .

— Ինչո՞ւ, ճանրմ հիմա սըրա՞ն է, մայրի՛կ . . .

— Տէ՛ . . . Երկան մընէր, մալի գոգոթալը պուլուզադ պիտի պերել տամ . . .

— Խելքի՛դ եկաւ մայրիկ, ի՞նչ կըսես կոր . . .

— Դուն սուս ելիր, պաշխա գործ կայ գործին մէջը, հէմ ոսնկ նայէ նայիմ . . . Ի՞նչ . . . բուտուտ ալ վաղեր է, կտործիկ մըն ալ բուտուտ թուղթը թող դնէ տէ պէրէ, անանկ ալ կերթայ կոր անանկ ալ . . .

— Մայրիկ ինչեր կըսես կոր, ամօթ է . . .

— Բեզ մէկուն պիտի ցուցնենք աղջիկս, կըսէ ջատուկը, նայէ խրամէթըդ ելաւ, ինչուդ պէտք, մօրըդ խօսքը մտիկ ըրէ . . .

— Ինծի նայէ տնտես աղբար, կըսէ մայրը ոտքի ելլալով բազմութեան մէջ, մինչ տընտեսը չի մը ձեռքը ջուր կը բաժնէր . . .

— Ձի մնաց մարիկս, չի մնաց, հիմա կը բերեմ . . .

— Ջուր չեմ ուզեր կոր ծօ՛, խենդ չուն, դուն եկուր, դո՛ւն . . .

— Գործ ունիմ մարիկս, աեզ չիգայ քի անցնիմ . . .

— Ծօ՛ հոս եկուր կըսեմ կոր քեզի . . . ըսելով մօտը կը կանչէ,

— Սա բալլինքը առ, մեր տունը գընայ, հաճի նինէին ըսէ քի, Գուլիկճանիս սընտուկը բանայ, մէջէն մալի պուզան հանէ ֆաթուռա պոխճան դնէ, թուղթով ալ բուտուայ կըծիկ ընէ տէ թող տայ, առ բեր, ետքէն աչքս նայէ . . .

— Պէ կէօզիւմ հիմա սըրա՞ն է . . .

— Ծօ՛ հայտէ պոխճիչդ կուտամ . . .

Տնտես աղբարը պախճիչին ճայնը լսելուն, նստարաններուն վրայէն ցատկելով կը մեկնի, մինչ աղջիկտեսի պատրաստութիւն տեսող հանդիսատես ընտանիքը, բազմութիւնը ճղելով ճղճղելով վարժարանին մէկ սենեկը կ'առանձնանան, ուր կսկսին իրենց ըլանին գործադրութեան .

* *

Հանդէսը աւարտած է հիմա, բազմութիւնը խուռներամ կը մեկնին հանդիսավայրէն տաք և անուշ սպաւորութեան մը տակ .

Բոլոր աշակերտները, ինչպէս նաեւ չըրջանաւարտը իրենց ծնողայ թեւին տակ, ուրախ զուարթ կը յառաջանան, մինչ իրենց ետին հոծ երկսեռ խուժանը կը հետեւի ցընծաքին չնորհաւորութիւններու անձրեւի մը տակ .

Հաղիւ թէ խօսուած երիտասարդը իր ծնողքին հետ դպրոցին դռնէն դուրս կելլէին, իրենց հետեւող երկու ջատուկ կիներ զիրենք կ'արգիլեն, կեղծ ժպիտ մը յօրինելով չըթնեցնուն վրայ, մինչ երկու աղջիկներ, թաղէ թուալէթով քիչ մը հեռուն կը կենան . . .

— ԱՖ կընէք քորուկ, զաւակը ձե՛րն է . . .

— Այո՛, Աստուած պաղըչլամիշ ընէնէ մերն է . . .

— Դիտնալըս տիպլումաթ եղաւ աս տաւրի . . .

— Այո՛ . . .

— ԱՖ կընէք ամա, տէմիր թալընտա տէօյիւլիւր կըսեն, խըսմէթ ըսածդ բէնիրլի բիտէի պէս տաք տաք ըլլայ նէ աղէկ կըլլայ . . . պիտի ըսէի քի . . . Էկէր խապիլը կայ տէ Աստուած ալ հրաման ընէնէ, աղջիկս մէյ մը տեսնայիք տէ խօսք կապ մը ընէինք . . .

—

— Ձէ սանքի փարայճաւ բան մը ուղեւ լու օր ըլլաք նէ, նստած տունիս երկու տիրէկը կընամ տալ, չիւնքիւ իւչիւնճիւ տիւրէկը պլտիկիս պիտի տամ, տէօրտիւնճիւին վրայ ալ ես պիտի նստիմ . . .

Այս առաջարկութիւնը լսող հայրը խօսք առնելով,

— Ինծի նայէ քուրուկ , հրամանքդ ո՞ր հէքիմին նայել կուտաս կոր ինքզինքդ . . .

— Վրաս բարի , ա՛տ ինչ խօսք է , պահ չունիմ . . .

— Ձէ սանքի , ես ախպար հէքիմ մը ունիմ աէ , մէյ մընալ անոր ցուցնէիր ինքզինքդ . . .

— Տէր ողորմեա՛յ . . . աս ի՞նչ կըսէ . . .

— Ինծի նայէ՛ , քեզի ո՞վ ըսաւ քի չօճուխիս տատա կ'ուզեմ կոր աէյի , տահա նայէ մելանը մատը , գիրքը խօլթուխն է , նասըլ տալափ կ'ընէք աէ ճէսարէթլէնմիլի կըլլաք ատանկ խօսք մը բանալու . . .

— Ի՞նչ գիտնամ , աչկը կոց տըղայ է , մուրի խըսմէթ ըլլայ ըսի . . . աղջիկս մէթ ընել չըլլայ ամա , մօր պէս կը նայի դաւակնիդ . . .

— Անոր մարը ողջ է տահա նայէ , իրաւքի աս դպրոցէն ելաւ ամա՛ , տահա վերէն վեր դպրոց պիտի դնեմ . . . հասկըցա՞ր . . . հայտէ գընայ բանդ , դուն առ աղջիկդ , տառը փարայի ըռէզէնէ առ տէ սալամուռան դիր . . .

— Հիչ մէկ բանը հողս չեմ ընէր կոր , սա անտեսին տուած հարուր փարայ պախչիչս կը մեղքնամ կոր . . . մանտրուք ալ չիտամ պարէ . . . :

* * *

Իրականութիւն կամ մտացածին , խնդիր չէ , բայց պէտք է գիտնաք որ այս կարգի աչքը բաց աղջկանց մայրեր չեն պակսիր մեր մէջ , որոնց չնորհիւ այսօր իրենց աղջիկներուն անունը կոտորած է :

Փռլթկոտութիւնը կը հասկընամ , որ ինքնին գովելի բնոյթ մըն է , սակայն ասոր մէջ ալ չափազանցութիւնը կատարեալ խախտութիւն է , ինչպէս տեսաք վերի օրինակէն :

Մեր աղջիկները քիչ մը ծանր բռնենք և լիպլիպի պէս մինչև իսկ մեղանաթաթաւ դպրոցականներու չի հրամցընէք , ասով , թէ՛ աղջիկ դաւակներու պատիւը վրկած , բարձրացուցած , և թէ՛ Ս. Պատկի նուիրական համը հոտը տեղը պահած կըլլանք :

Փոխոնակ ձեր աղջիկները մարակեղուքի մը լեզունիդ մարակեղէք :

Վ. ՓԱՓԱՁԵԱՆ

ԱԶԳԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻԲ ՆՈՐՈԻԹԻԻՆ ՄԸ

Հագուիլ , շուիլ եւ աղամանդներով զարդարուիլ , ինչպէս նաեւ սան կարասիներ կոկել ամէն կերպով , առանց քակնիդ պարպելու

Ս. Ե. Լ.

Ա. ՊԱՌԻԿ

Մայր ես , աղջկանդ օծիտը կը մտածեմ՝ դիմէ՛ .

Օրիմարդ ես , շիք և աժան հագուիլ կուզեմ՝ դիմէ .

Երիտասարդ ես և շիքը կը սիրեմ՝ դիմէ .

Տարեց ես և ցուրտէն պատապարուիլ կուզեմ՝ դիմէ .

Տղաքներ ունիս որոնց պիտոյքը գանկը կը ճաճեցնեն՝ դիմէ Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրզակներու պէտք ունիս՝ դիմէ Եկածը Կազանդ , է նուէրներ զնել կը փախաքիս՝ դիմէ .

Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ

Ձեռքդ պարսպ ճամբայ քալել չեմ սիրեր՝ դիմէ .

Կուզեմ տունդ կոկել ճաշակուոր կարասիներով՝ դիմէ

Առաջնակարգ և տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ

Կուզեմ շիք , ճաշակուոր և լաւ տեսակ փողկապներ ու-

նենալ՝ վերջապէս կուզեմ ոտից ցզուլս հագուիլ , շքուիլ ,

պճնուիլ

դիմէ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՄ ՇՈՒԿԱՅ, Գուշումճըլար փողոց թիւ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի , ճերմակեղէնի , ֆանթէշիի , աղամանդի , ժամացոյցներու , չղթաներու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ զնոդներու համար հարիւրին 30 կանխիկ և մնացեալ գումարին հարիւրին 5ը չաքաթական վճարմամբ .

2. Կանխիկ զնոդներու համար հարիւրին 5 ղեղչ .

3. Կանխիկ ծախուած ասրանքներէն միմիայն աղամանդեայ դոհարեղէնները կըրք դորձածուած բայց անվնաս մնացած ըլլան , հարիւրին 10 ղեղչով , իսկ ապառիկ ծախուած և անվնաս մնացած միմիայն աղամանդեայ դոհարեղէններն ալ հարիւրին 15 ղեղչով ետ կ'առնուին :

ՍՍ.ԿԱՐԱՌԻԹԻԻՆ ԶԿԱՅ

ԳՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

I I

Ամէն Ժամանակէ աւելի ուս քանի մը տարիներս է որ մաւութիւնը կը զբաղի գրականութեան ակադեմիայի վարակուած պատանիներու խնդիրով : Դեռ շատ չընէր երբ բաւական բան գրուեցաւ « գրական ծիրախ » ին վրայ : Գրող ըլլալու տենչը ծիրախ տալու ցատորութեամբ արտայայտելը ճշգրիտ նմանութիւն մըն է : Անգամ մը որ օձիքէ ձեռք տուիր, ա'լ կրնաս նէ ազատէ :

Իրաւ չատեր կան որ անուանին հրատակութեամբ սին փառքով կուզեն գրել : Ասոնք քիչ մը ատեն մաքառելէ վերջ տեղի կուտան պարտուած : Յամառ յարատեւութիւնը անվրէպ ուղին է իտէպիկ հասնելու, սակայն անիկա որ չունի հաստատուն իտէպի մը չկրնար յամառ յարատեւող մը ըլլալ :

Բայց ամէն բանէ առաջ կարեւոր է քննել թէ ինչո՞ւ համար գրականութիւնը « գրական պարմանի » մըն է մեր պատանիներուն համար, և թէ որո՞նք են իր « ցանկալի աչքեր »-ը և « յանկուցիչ գեղը » : — Մեր մէջ և ո'չ մէկ թերթ իրեն մասնաւոր ճամբայ մը գծած է, գրական լափերին թոս մըն են ամէնքն ալ, ուր կարելի է գտնել գրականին քով զաւելտականը, տնտեսականը և ինքնուրոյական ամէն թերթ իր մասնագիտութիւնը միայն կը մշակէ ու գիտական թերթ մը երբեք չհրատարակեր գրական յօդուած, եթէ նոյն իսկ ամենէն նշանաւոր գրագէտի մը կողմէ զրկուած ըլլայ : Գրական այս անճաշակութեան հետեւանքը այն կ'ըլլայ որ առ ի չգոյն մանկավարժական թերթի, ստիպուած աշակերտներու և պատանիներու ձեռք կը տրուին գրական և ընկերական հարցեր յուշող թերթ մը, ուր գաղափարներ կը փոխանակուին, գրողները կը փառաբանուին, աղուոր ածականներ կը ստանան, համակրանքի արժանի կըլլան, ժողովուրդին մէջ անուն կը հանեն, և ահա պատանիին փառասիրութիւնը արթնցած է, փոխանակ արուեստի մը կամ աւելի գեղարարին աստղաբեկի մը մէջ յաջողելով գափնիներ շահելու, աւելի հեշտ կը թուի իրեն — և իրաւամբ — գրական

նութեան մէջ շահիլ այդ գափնին, շնորհիւ բարեմիտ խմբագիրներու, որոնք չեն վարանիր արժեմին շարժեմին գովեստներ չընալու, անոնց աշխատակցութիւնը ապահովելու համար :

Այս տեսակէտով գրող ըլլալ փառք ունիւնէր, ինչպէս ըսի, քանի մը ապարդիւն ջանքերէ վերջ վազ կ'անցնին իրենց գաղափարէն, սակայն անոնք, որոնց մէջ փոքրեկած է արուեստին հուրը, անոնք մշտապէս զանախաւ մը կը մնան թերթերու : Համար ճշգրտութեամբ վրայ գաղափար մը կազմելու համար կ'արժէ անգամ մը աչքէ անցընել երկու տարի առաջ պարբերականի մը լուսացած նորերու բաժնին թեկնածուներու ցանկը, որոնցմէ հաշիւ քանի մը հատը յաջողած են, իսկ միւսները հեռացած են ուրիշ տեղ փնտռելու համար իրենց փառասիրութեան գոհացումը :

Հիմա յօդուածիս բուն նպատակին անցնիմ : Մեր պատանիներու « գրող ըլլալ » չը կարենալուն պատճառը քննելէ վերջ խումբագիրին կիցնայ վերլուծել ոչնուազ շահագործիւ երեւոյթի մը պատճառները : Այսօր գաւառներու մէջ ունինք պատկառելի թիւ մը գրողներու, որոնցմէ շատեր եւկար տարիներէ ի վեր գրել կը շարժեն կրթական բոլոր նիւթերու վրայ, աշխատակցած են շատ մը թերթերու և պարբերականներու ալ, սակայն ասոնք ինչո՞ւ չեն կրնար գրագետ ըլլալ, միակ յենակէտը իրենց սեւեռամտածումին, և կը մնան միշտ նոյն անձանթը, և շատ շատ « մեր գաւառացի աշխատակիցը » կամ « մեր մասնաւոր թղթակիցը » գովասանքը միայն կրնան ստանալ, մինչ Պոլսոյ մէջ երէկուան անձանթը այսօրուան « համակրելի գրագէտը », « փնտռուած աշխատակից », « երկրորդ քանակութեամբ » ու տակաւին շատ մը բաներ կըլլայ, ու երէկուան գրողը յայտնաւոր, այսօրուան ծանօթ գէմբը :

Վստահ եղիք որ այս պարագան մեծ շահեկանութիւն ունի մեզի, գաւառացի գրողներու համար, և թէ այս մասին ըլլալիք տեսութիւնները ժամավաճառութիւն մը կամ լոկ գրական հաճոյք մը ըլլալէ աւելի վեր բան մը պիտի ըլլան :

ԵՐ. Մ. ՃԻԻԷԻՆԱՆ

ԺԱՄԱՆԱԿ

Տօք. Պենոն Էֆ. Պէզազեան, որ մէկ քանի ամիս իզմիր կը գտնուէր, չարթուս Մայրաքաղաքս հասաւ, ուր քիչ ատեն պիտի մնայ ու կրկին ուղեւորական պտոյտ մը պիտի կատարէ իզմիր և շրջակայքը :

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Ամառուան սափեն կարծես անբսժան,
Ձանձոյքներու մեջ, սուղ եւ կամ սոժան,
Երբ մեր կրթական յարկերն ամենայն
Պէ՛րն հանդեսներով, — միշտ՛ց ընդունայն —
Իրենց արտադրած հունձներն ու ցորեն
Ի յայտ կը բերեն, սարեն կամ ձորեն,
Եւ զբոսասէր մարդոցմ ոմանք
Իրենց տեսակին մեջ խիստ աննըմանք
Փութկոտ ֆայլերով կը դիմեն հանգես
Դիտելու բոլոր ինչ որ կայ ի տես,
Եւ ալ իմ կոչմանս յոյժ հաւասարիմ,
Պէ՛տք է որ մի քիչ անոնց պինդ փարիմ,
Եւ ընթերցողացս ամբողջ հաղորդեմ
Կարծիքներս անկեղծ, ուղիղ, բեր կամ դեմ:

* * *

Իրեւ հրաւիրեալ շերմիւ, անկեղծիկ,
Բայց համոզմանս հետ ո՛չ համակարծիք,
Նախընթաց շաբթու ֆայլերս իմ
Տարին զիս մինչեւ դեպ պէ՛րն մի բաղ
Ուր Մխիթարեան Հարկ պերճաբարբառ
Իրենց դրպրոցին մեջ շրջեղափառ
Սարեւոյ երկ կրք. հանգես մ'որ մի քիչ,
Իր հանգամանքովն անցոյց, մոմսփիշ,
Փառասեց խաղաղեմն օղի՛ն հրաւսալ,
Եւ ի յայտ բերաւ շողոզուրն, անկապ,
Խօսքեր հնարիւմաց, դարձուածով հարսար,
Ուրմէ վարժարանն անհնի ի կոսար,
Մինչ վարիչ Հայր սուրբն անգին Մենեպիւ
Կը զգուէր, շոյր որպէս մի բաւիւ,
Մեր խմբագիրներն, կռուան ապաւեն,
Որպէս զի դրպրոցն, ո՛ն, չի պարս աւե՛ն:

Կեօմիւլենեան մեր Տէր Արքայան Մովսէս,
Որուն համակրանք կը սաժեմ ներսէս,
— Անկեղծ մի յարգանք, ո՛չ ի սէր յանգի —
Շաբթուս մեջ Պոլիս գալ յոյժ փափաքի,
Ձի Պիլեմիկի օղն ու ջուր ալ իր
Աչիքն չեն բընաւ յարգի, սիրալիր:

Գորամանեան Մե՛ծ. Էֆենտին Արքիմ,
Որուն արեւն արդ բարիք կը յորդին,
Եւ իր հանգուցեալ եղբօրն ի պատիւ,
Բարեգործութեան մղուած է սերտիւ,

Անոր մըտադրած բարւոյն ի վախճան,
Փափաք յայնմա՛ծ է անդարձ, ժառանգ,
Հոգաբարձու Տեառց Հիւանդանոցին
Նուիրել գումար մ'որ լոկ, առանձին,
Բաւական ըլլայ լընուլ մի քերի:
Մաղթենք որ փութով ըլլայ, կասարի:

Իբր արուեստագէտ խիստ, մեծահոշակ,
Եւ իր հասակով ո՛չ այնքան միջակ,
Տփղիսէն Պոլիս հասաւ ժայտադին,
Տիկին Սիրանոյսն անբիւծ, քանկազին,
Որ իր դերերուն մեջ խիստ դժուարին,
Հիացումներու մեջ անկեղծ, խորին,
Կը փայլեցընէ տաղանդն իր հարուստ,
Իրեն իբր ընծայ տուած ի վերուստ:

Մինչ հարուստներէն մեր շատերն, ոն, չինչ,
Չեն կամիր ընել բարիք մ'իսկ ոչինչ,
Եւ իրենց գանձին վրայ միտք նընշեն,
Ձի մի գուցէ ան խոյս տայ . . . խոռոչէն,
Բարասանեանց Մե՛ծ. Պարոն Սողոմոն
Կը քանկ ասոնց վրան իշխուն,
Եւ 9000 ոսկիներ դեղին,
— Մեր հարուստները դեռ քող դանդաղին —
Տըվողիսի մանչոց դրպրոցին ընծայ
Կը քողու որ իր հոգին ալ ցընծայ:

Մեր Ս. Պատրիարքն Հայրն որ հանդիմով,
Հայ դրպրոցներու առաջնաց քով,
Կը դիմէ եւ միտք իր յորդորներով,
Յոյց կուտայ անոնց գլուխն ու գորով,
Այս տարի կրկին պիտ' պատուէ մերին
Հանդեսներն ամբողջ կրթական խորին,
Ու քաղցներովն իր անգուգակուն
Դասեր պիտի տայ անգին, պատուական:

Ռոսոսթի Տէր Բահման Բարբող
Որ իր կենցաղին մեջ արդ արտադող,
Կրօն. ժողովին որոշմամբ սաստիկ,
Կ'անցընէ մի կեանք խիստ, չարաբաստիկ,
Պատրիարքարան ուղղած մի գրքով
Կը խնդրէ ներում եւ կամ մի գորով,
Յայնեղով քէ ինք օր մ'օրանց երբեք
Քաղին մեջ չէ՛ բնաւ եղած վարկաբեկ
Ու իր կոչման մեջ ցերեկ ու գիշեր
Իր Առաջնորդին անունն յար յիշեր:



ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Բարեկամներէս ամերիկացի նաւապետ էտուարտ Ատամս, Եանքիներու բնական արկածախնդրութիւնով ծրագիր մը պատրաստած էր ճամբորդելու Ափրիկէի կեդրոնական այն մասին մէջ որ Տահոմէյէն կ'երկարի մինչև վերին Նիկէրի ափունքը: Այս նաւապետը սակայն չէր ճամբորդեր լեռնորդ չափերու, գետերու անծանօթ մնացած ակերը երեւան բերելու և կամ աշխարհաբարական ճշգրտման կատարելու համար, ինչպէս իրենց յատուկ լեզուովը կըսեն այդ Եանքիները « ատոնցմէ կուտ չելլեր » և ինչ որ կուտ չբերեր, թաղուած գործ մըն է իրենց համար: Հետեւաբար այդ Ամերիկացի նաւապետը իր ճամբորդութեան տուած էր առեւտրական արշաւախուժի մը ձեւը, և հետը ունէր փոխանակութեան վաճառքներու մեծ մթերք մը, այսպէս, ըստ իս, աւելի օգտակար հանդիսանալով քաղաքակրթութեան քան աշխարհի բոլոր լիվինկըսթընները: Ափրիկէի խորերու բնիկներուն գաղափարներ տուէք, ոչինչ պիտի արգասաւորուի, որովհետեւ իրենց միտքը անընդունակ է. բայց փոխանակութեան իրեղիսներ տուէք, ահա քայլը առնուած է և առաջդիմութիւնը ժամանակի գործ մըն է այլեւս: Մանաւանդ որ առարկաներ, նիւթեր տանողը շատ աւելի սիրով և հիւրընկալութեամբ կընդունուի:

Նաւապետ Ատամսը ճանչցած էի Ուլկիանիոյ և Սան Ֆրանչիսքոյի մէջ: Քսան անգամէ աւելի փափաք յայտնած էի Ափրիկէ երթալ և այցելել Նիկէրի թրջած երկիրները և երբ ան իր այս ճամբորդութիւնը որոշած էր, բնական է թէ առաջարկած էր ինծի իրեն ընկերանալ: Ես ալ հաւանած էի:

Արդէն ներկայ պատմութեանս սկսած ատեն, մենք Ափրիկէի եզերքը անցած էինք Սենեկալէն մինչև Ուարդէի եզերքը, որ Նիկէրի գետաբերանին կարեւոր ճիւղերէն մէկն է:

Լուսիլուս Գրէցուլեսքօ անուն երիտասարդ Վալաք մը, Պուէնոս Այրէսի մէջ ի դուր բաղդ մը փնտռելէ ճարահատ կը վերադառնար, երբ Տաքարի մէջ եկաւ միացաւ մեզի և ալ չքաժնուեցաւ մենէ: Նաւապետին Սարա երկկայմ նաւով, Պէնսէնի գետն ի վեր, նաւարկելով խարսխեցինք Կաթոյի առջեւ:

Գետեզերքի գիւղերէն մէկուն պետը կամ Օպին՝ Արօպօ սիրով ընդունեց մեզի, գերիներ նուիրեց մեր ծառայութեան համար և իր տղան Ուրանօն տուաւ որպէս զի մեզի ընկերանայ և ի հարկին իր աղղեցութիւնը գործադրէ մեր պաշտպանութեան համար:

Նաւապետ Ատամսի ծրագիրն էր Տահոմէյի սահմանագլուխէն ելլել մինչև վերին Նիկէրի եզերքը: Այս բանին համար իրեն պէտք էին գերիներ, որոնք փոխադրէին երկրին ճաշակին համաձայն ապրանքներ, և զօրքեր՝ իր պաշտպանութեան համար: Այս ամէնքը, բաւականաչափ գերի և 300ի չափ զօրք, ձեռք ձգեց Ուէնիի կամ Պէնսէնի Պետէն կարգ մը ապրանքներու փոխարինութեամբ մը: Զարմանալին հոն է որ Ուէնի բնակարանէն կարգ մը մարդիկ և Պետին ընտանիքէն 10 հոգի Ատամսի պատանդ տրուեցան որոնք Սարայի մէջ պիտի մնային, Բ. նաւապետ Ժօրժ Օլտհամի հսկողութեան տակ, մինչև որ վերադառնայինք այս վտանգալից արշաւէն: Ուէնիներու պետը ետ թողած հրացաններ և ուս ունենալու համար, առանց այլ և այլի յանձնած էր իր ընտանիքին անդամները և մէկ քանի անձեր, քանի որ Ափրիկէի այդ վայրենի կողմերը ընտանիքն եւ ուրիշները ամենէն անարժէք և դիւրաւ ձեռք բերուելիք բանը նկատուած է: Եթէ մեր մէջէն ու է մէկուն մազի չափ վնաս մը գար, մնացեալները իրաւունք պիտի ունենային ծախելու բոլոր պատանդները իւր գերիներ, և կամ պահելու իրենց անձին համար:

կաթոյէն դէպի ներսերը մեր մեկնելուն առեն, Սարա նաւը աւելի վար ուրիշ տեղ մը պիտի երթար խարսխել և պիտի սպասէր մեզի: Եթէ տարիէ մը չվերադառնայինք և կամ մենէ լուր մը չարնէր նաւին Բ. նաւապետը հոն մնացող ամերիկացի նաւաղները, ճամբայ պիտի ելլէին դէպի վեր Նիկերէն, որչափ որ կրնային, դիմաւորելու համար մեզի: Նաւը չպիտի կրնար մեկնիլ բաց ծով, մինչև որ հաստատ ապահովութիւն ձեռք բերուած չըլլար, թէ ամենքնիս ալ կոտորուած ենք կամ տեղական Խոտերէ ճողած:

Մեկնեցանք: Պենէնի սահմանագիծերը անձնելէ ետք Ենպուներու խորհրդաւոր երկիրը հասանք կեդրոն-քաղաքին՝ Չաաէի մօտ, ուր ժամանակ մը մնացինք: Եւ մինչ մեր Ատամա բարեկամը իջեւանը վերցնելու կը պատրաստուէր իր ծրագրին հետեւելու համար, անդուստ պատիպք մը ունեցայ մանրամասնաբար այցելել Ենպուներու երկիրը, ուր Եւրոպացիի ոչ մէկ ոտք դպած էր:

Այս չափական ճամբորդութեան համար պէտք էի բաժնուիլ Ատամանէ քանի մը ամիս: Ան կը ճամբորդէր վաճառքի մթերքով մը և իր չահուն համար կը կենար տեղ մը երկու կամ երեք օր: Մինչև ևս կը կենայի երկար առեն աննշան տելեր, գիտական, բնապատմական, լեզուաբանական և աղ-գազրական հետաքրքրական նորութեանց համար:

Ատամա հաւանեցաւ խումբին երկուքի բաժանման: Ինծի տուաւ Պենենցի 15 պատերազմիկներ հրազէններով և քարապիւնաներով զինուած, և 10 գերի, որոնք կարգ մը գեղօրներ և իրեղեններ բռնցած էին, որպէս զի կարենայինք նուէրներ տանիլ մեր այցելած տեղերու Պետերուն և մեծամեծներուն:

Կարաւանիս մարդիկն էին:

1. Արօսօնիս պետին որդին Ուրանո, որ չուրջ 26 տարու մեծղի, զօրեղ, մտացի սեւամորթ մըն էր, իբր Պետին որդին մեծապէս ազդեցիկ և վերին հրամանատարը տրամադրելի պատերազմիկներուն:

2. Վալաք երիտասարդը Լուսիուս:

3. Բաթրիք անուն Իուլանուացի մը, երկրորդ հրամանատարը, որուն վրայ մարդ

կրնար վստահիլ ամէն կերպով, այնքան կորովի և անձնուէր էր:

4. Նաւապետ Ատամաի խոհարարը Մ. Ճիմոս, Լուիզիանացի խառնածին մը, որու երակներուն մէջ քանի մը կաթիլ ճերմակի արիւն զրուած էր, իր մօրը մոռացումովը և ծառայած տեղին հաճոյականութիւնովը: Պարծենկոտ էր և խրոխտ մեծ ընտանիքի մը վերջին մնացորդը ըլլալուն համար: Յաճախ կը վիճէր Բաթրիքի հետ, որուն կատակները Ճիմոս լուրջի տանելով լարկութեան ծիծաղելի ժայթքումներ կուենար: Բայց ամէն բան կը հարթուէր գաւաթ մը ուռմի և ուխտքիի առջև:

5. Սեւամորթ Շարլի, իր անբաժանիկ էջնի՝ Բոքոյի հետ որ մեր դիւրաբեկ պաշարները կը փոխադրէր: Շարլի կ'օգնէր Ճիմոսի:

Այս էր մեր կարաւանին արական մասը: Մեզի կընկերանային նաեւ վեց գեռատի սեւամորթուհիներ, զորս իբր սպասարկու նուիրած էին Պենենցիներու երկու պետերը: Մենք, երկրին նախապաշարման համար, ստիպուած ընդունեցինք, քանի որ մերժումը նախատինք մը է Պետերուն, և այդ խեղճները այն ատեն պիտի սպաննուէին իբր անգոսնուած դոյք մը, որովհետեւ ճերմակները մերժած էին զանոնք:

Ձէննա, Մօյա և Քանուն, երեք հրաշալի գեղեցկութիւն մը ունէին, և իրենց երկրին աղնուականներէն էին: Ազնիւ և գեղեցիկ տիպար մըն էին Հապէշնեւուն պէս, և միայն իրենց մօրթն էր որ սե էր: Իրենց քիթը ուղիղ և նուրբ, բերանը փոքր, եղնիկի խոշոր աչքեր, կատարեալ ձուածե դէմք մը, սպիտակամորթի ամենէն անթերի գեղեցկութեան մը հետ բաղդատուելու չափ: Իրենց կակուղ և մեծաքսային երկար մազերը միշտ հոտաւէտուած էին և յարգարուած վերջին պղրանքին համաձայն Միւս երեքը Կուինիացի սեւամորթուհիներ էին, պարզ գերիներ, որոնք երեք գեղեցիկներուն ծառայութեան կոչուած էին:

Օր մը Քանուն, բարկացած, աւերած էր Լուսիուսի վրանը և անոր գեղանի գերուհին Մօյան իմ վրանս բերուած էր:

— Ինքզինքս քեզի կուտամ, ըսած էր

դեռատի կինը, ասկից ետք իմ տէրս եղբւր, ես պիտի հետեւիմ քեզի այնպէս՝ ինչպէս կը հետեւի վիթին շուքը՝ իրեն՝ անապատի աւազներուն վրայ:

Այս խաղաղիկ համաձայնութենէն գոհ Լուսիուս ընդունեց քաքեթ մը սիկառ, զոր ձեւի համար իբր փոխարինութիւն տուի անոր և առեւտուրը լմնցած էր:

Բայց այս պարագան բացատրութեան կարօտ է: Պենիններու և Եէպուններու մէջ վտրութիւն մը կայ. գերինները կրնան իրենց տէրը փոխել, հերիք է որ գտնեն մէկը որ վճարէ իրենց արժէքը: Ասոր համար խեղճները դուռնէ դուռ կը պատին և հանդիպած ազատ մարդուն կըսեն.

— Ինքզինքս քեզի կը նուիրեմ, յարմար արժէքը վճարէ և իմ տէրս եղբւր:

Եւ դիւրին է փոխանձուիլ, քանի որ սոստովորութիւն մը դարձած է և տառապող գերի մը գնելը ազնիւ գործ մը նկատուած է: Գերին եթէ նոյնիսկ շատ անտանելի կացութեան մը մատնուի, կրնայ մահ խնդրել, և աէրը չի կրնար մերժել այդ բանը: Այս պարագային, երբ տէրը հաւանի, գերին կը տարուի կրօնական զոհաբերողին՝ Թարպուքի մօտ, որ ոճրագործներու ալ դահիճն է, և մէկ հարուածով կը գլխատէ թշուառը, կուռքին ոտքերուն տակ: Եթէ գերի մը երեք անգամ տիրոջ փոփոխում խնդրէ և չյաջողի, այն ատեն քուրմերը զայն կառնեն կա՛մ կուռքին սպասարկութեան համար և կամ կրօնական հանդէսներու իբր մատաղ պահելու համար: Մարդու զոհը գեռ կայ Կեդրոնական Ափրիկէի և Հասարակածի կիսալայրենի ժողովուրդներուն մէջ, կրօնական կամ հասարակային զանազան հանդէսներու առթիւ, յաճախ անգութ վայրագութեամբ մը:

Մարդիկը այնքան անարժէք են այդ կողմերը որ կերպասի կտորի կամ քիչ մը ծխախոտի, ապակիէ մանեակի մը և այս կարգի ոչինչ նիւթերու հետ գերիններ կը փոխանակուին: Այս պատճառով էր որ ես ալ քաքեթ մը սիկառ տուի բարեկամիս, իբր փոխարժէք: Այս խեղճը ո և է կերպով չէր ուզեր գտնուիլ Լուսիուսի վրանը, ուր իր բաղդին վրայ վստահ չէր, քանի որ միւսին՝ Մօցային հրամանին տակ պիտի գտնուէր:

Կեդրոնական Ափրիկէի բնիկներուն ինչպէս նաև Մայրագոյն Արեւելքի մէջ հիւրասիրութիւնը կը բաղկանայ սնունդէ, առանէ և կինէ: Մ. Արեւելքի մէջ տեղւոյն և կրօնական աւանդութեանց համաձայն ընտանիքէն կին մը կամ օտարունի մը կը յատկացնեն քու սպասարկութեանդ համար: Կեդր. Ափրիկէի մէջ ցեղապետները և մեծամեծները միշտ Եւրոպացիներու տրամագիր կընեն սպասարկուչներ:

Եւ որովհետեւ ո՛ր երկուքին որ այցելէինք, ան քաղաքավարութեան մէջ չլիւրահալու համար մեզի գերիններ պիտի նուիրէր, տեղական աւանդական սովորութեան համաձայն, ուստի անոնց արժանապատուութիւնը չվիրաւորելու և մանաւանդ մինք ալ աւելորդ բազմութիւնով չխնդուելու մը տաղութեամբ, երբ գիւղ մը հասնէինք, առաջուց գիւղապետին կը տեղեկացնէինք թէ մեր զրկած նուէրներուն փոխարէն գերիններ չըրկուի, չնորհակալ ենք, քանի որ արդէն մեր ունեցած վեց աղջիկները բաւական էին մեր վրաններուն անական աշխատութեանց ծառայելու:

Բարեբաղդաբար մեր այս կանխադուշութիւնը արդիւնաւոր կըլլար, և անոնք մեր նուէրները կը փոխարինէին տեղական ստուղնի, բանջարեղէններ, թռչուններ և երէններ զրկելով:

Այսպէս մեր կարաւանը կաղմ եւ պատրաստ էր, ձեռնարկելու մտադրուած տարօրինակ և մի և նոյն ժամանակ արկածայից և հաճոյական արշաւանքին:

Մեր կարաւանին կազմութեան ամբողջութիւնը յայտնելու համար ըսենք թէ տեղական երկու ձիեր, զորս մենք կոչեցինք Քատուր և Սայիպ, յատկացուած էին մեր հեծնելուն, և երկու սայլեր ալ ունէինք, մեր վրաններուն և իրեղեններուն փոխադրութեան համար:

(Շարունակելի)

ԱՐՁԱՆԱՅԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ.Ալի ֆառէսի թ. 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԱԵԼԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Հարան, Թօխաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տու-
կունութեամբ և գիներու անորոշելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձեռնուած յատուկ ընտիր հա-
գուստներու, կանանց քէշրոյիներու և
տղայոց չիք և գիմացկուն ֆօքսիշմներու
ծոխ մթերք մը պատրաստ ունի, որ
ջերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից.

աակՍըկո լթիւն չկայ, թիւը 2 գրչ է.

Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կառարուին.

42—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր,
ջուրի և անձրեւի կը դիմանան, մուկ-
ները կը ջնջեն ևն. ևն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արշընը 10—15 փարայ.

Ներսի և դուրսի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արշընը 20—30 փարայ:

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց դիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է սոյն գներով իր վը-
րայ առնել ամէն գործ, թէ ներկն և
թէ գործաւորոյցէր մէջն ըլլալով:

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պագըր-
ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան: — Գա-
ւառները գործակալներու պէտք կայ,
դիւրամատչելի պայմաններով:


7—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱՒԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեԳափու, Ճեղալ-Պեյ խան, քիւ. 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԵՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Բ Ա Ր

Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամֆոնի
եւ երկկողմ Բլաֆներու, Կեղրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքիւր
հօնաւորի կից, Եալորգ խանի տակ
քիւ. 2: Մասնաձիւղ Պահճե Գաբու
քիւ. 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլաֆներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: